## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայն ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 06

10 սեպտեմբերի 2021 թվական

### ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 7 (յոթ) անդամներ:

Բացակա էին Վահրամ Ապրեսյանը, Հայկազ Բաղդասարյանը, Արման Խանզադյանը և Հայկ Վարդևանյանը:

**Ավագանու նիստին մասնակցում էին՝**

Ջրաբեր բնակավայրի վարչական ղեկավար Մուշեղ Հարությունյանը, Բյուրեղավան համայնքի ղեկավարի խորհրդական Միշա Եղիազարյանը, համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը, գլխավոր մասնագետներ Սարգիս Ղազարյանն ու Դանիել Դանիելյանը:

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը:**

**Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը:**

Մինչև նիստի օրակարգին անցնելը համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը հայտարարեց, որ ավագանու տասնմեկ անդամներից նիստին ներկա են յոթը, քվորումն ապահովված է և առաջարկեց սկսել նիստը:

*Լսեցին*

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԹԻՎ 6 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ***

*ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ *ավագանին որոշում է.*

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2021 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 6 հերթական նիստի օրակարգը՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման կիսամյակային հաշվետվության մասին:

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու 2011 թվականի հուլիսի 13-ի N 26-Ն, 2021 թվականի հոկտեմբերի 05-ի N 160-Ն, 2012 թվականի հունիսի 29-ի N 28-Ն և 2014 թվականի դեկտեմբերի 22-ի N 119-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

3. Հայաստանի Հանրապետության Կատայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 11-ի N 53-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

4.Հայաստանի Հանրապետության Կատայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքերն աճուրդային կարգով օտարելու, մեկնարկային գները հաստատելու և համայնքի ավագանու 2020 թվականի ապրիլի 15-ի N 25-Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին:

5.Հայաստանի Հանրապետության Կատայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գները հաստատելու մասին:

6.Հայաստանի Հանրապետության Կատայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 19 և 23 բնակարանները Ալեքսանդր Արշակի Խաչատուրյանին անհատույց օտարելու մասին:

7.Հայաստանի Հանրապետության Կատայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 9 բնակարանը Արմեն Ռուբիկի Ազիզյանին անհատույց օտարելու մասին:

8.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 49 շենքի 60 և 63, 64 բնակարանները Սիմոն Կամոյի Մարդոյանին անհատույց օտարելու մասին:

9.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Զորավար Անդրանիկի փողոց 44 շենքի 23 բնակարանը Ռիտա Ռուբենի Առաքելյանին անհատույց օտարելու մասին:

10.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 1 բնակարանը Վիրաբ Արամի Հարությունյանին անհատույց օտարելու մասին:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ- 7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 48-Ա/

Օրակարգը հաստատելուց հետո ներկայացվեցին որոշումների նախագծերը:

***Լսեցին***
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ***

*(Զեկ. ՍԱՐԳԻՍ ՂԱԶԱՐՅԱՆ)*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի՝ ***ավագանին որոշում է.***

1.Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման կիսամյակային հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 49-Ա/

*Լսեցին*

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 13-Ի N 26-Ն, 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 05-Ի N 160 -Ն, 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի N 28 -Ն ԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 119 -Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*|Զեկ. ԼԻԼԻԹ ԱՎՈՒՇՅԱՆ|*

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի՝ *ավագանին որոշում է.*

1.Ուժը կորցրած ճանաչել՝

1)Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու 2011 թվականի հուլիսի 13-ի «Բյուրեղավանի քաղաքային համայնքի սեփականություն համարվող հողամասերն օտարելու, մեկնարկային գները և ցանկը հաստատելու մասին» N 26-Ն որոշումը.

2)Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի հոկտեմբերի 05-ի «Բյուրեղավանի քաղաքային համայնքի սեփականություն համարվող գույքը աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու մասին» N 160-Ն որոշումը.

3)Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի հունիսի 29-ի «Բյուրեղավանի քաղաքային համայնքի սեփականություն համարվող հողամասերն աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու մասին» N 28-Ն որոշումը.

4)Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 22-ի «Բյուրեղավանի քաղաքային համայնքի սեփականություն համարվող հողամասը աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու և մեկնարկային գին հաստատելու մասին» N 119-Ն որոշումը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 50-Ն/

*Լսեցին*

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11–Ի N 53-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*|Զեկ. ԼԻԼԻԹ ԱՎՈՒՇՅԱՆ|*

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ *ավագանին որոշում է.*

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի 2021 թվականի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 53-Ա որոշման N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 51-Ա/

*Լսեցին*

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-Ի N 25-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԴԱՆԻԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ/***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով «Վարմօն Ռիելթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2021 թվականի ապրիլի 19-ի «143-01/Վ-021» գրությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ *ավագանին որոշում է.*

1.Համաձայնություն տալ Բյուրեղավան համայնքի ղեկավարի առաջարկությանը աճուրդային (դասական աճուրդ) կարգով Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Վազգեն Սարգսյան փողոց 16 շենքի թիվ 44 հասցեի 83.4 քմ ընդհանուր մակերեսով (վկայական 2730770, տրված 2010 թվականի ապրիլի 14-ին) տարածքը, Օղակաձև փողոց 13/2 հասցեի 0.04066 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման (վկայական N 22062012-07-0260, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0013-0144), 13/4 հասցեի 0.04388 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման (վկայական N 22062012-07-0262, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0013-0143), թիվ 13/6 հասցեի 0.0415 հեկտար մակերեսով բնակավայրերի

նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման (վկայական N 25112014-07-0061, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0013-0147) և Զորավար Անդրանիկի փողոց թիվ 27 հասցեի 0.1442 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման (վկայական N 2822156, տրված՝ 2011 թվականի հուլիսի 11-ին, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0013-0131) հողամասերն օտարելու համար:

2.Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի մեկնարկային գները՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների:

3.Անվավեր ճանաչել Բյուրեղավան համայնքի ավագանու 2020 թվականի ապրիլի 15-ի «Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող գույքն աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գինը հաստատելու մասին» N 25-Ա որոշումը:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 52-Ա/

*<u>Լսեցին</u>*

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*\/Զեկ. ԴԱՆԻԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***ավագանին որոշում է.***

1.Համաձայնություն տալ Բյուրեղավան համայնքի ղեկավարի առաջարկությանը աճուրդային (դասական աճուրդ) կարգով Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 40/1 հասցեի 0.19894 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման հողամասը (վկայական՝ N 30082021-07-0148, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0020-1105), Ջրաբեր գյուղի 8.46224 հեկտար, որից՝ 7.94794 հեկտար արոտավայր, 0.5143 հեկտար վարելահող, մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրը և

վարելահողը (վկայական՝ N 02082021-07-0065, կադաստրային ծածկագիրը՝ 07-055-0212-0148), 10.125 հեկտար, որից՝ 9.31505 հեկտար արոտավայր, 0.80995 հեկտար այլ հողատեսք, մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրը և այլ հողատեսք հողամասը (վկայական՝ N 05082021-07-0113, կադաստրային ծածկագիրը՝ 07-055-0212-0147) և 3.18 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրը (վկայական՝ N 02082021-07-0088, կադաստրային ծածկագիրը՝ 07-055-0212-0146) օտարելու համար:

2.Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասերի մեկնարկային գները՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 53-Ա/

*<u>Լսեցին</u>*

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՂԱԿԱՁԵՎ ՓՈՂՈՑ 50 ՇԵՆՔԻ 19 ԵՎ 23 ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՐՇԱԿԻ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՄԻՇԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Ալեքսանդր Արշակի Խաչատուրյանի դիմումը՝ *ավագանին որոշում է.*

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 16.51 քմ ընդհանուր մակերեսով 19 և 21.87 քմ ընդհանուր մակերեսով 23 բնակարանները անհատույց օտարել (նվիրել) Ալեքսանդր Արշակի Խաչատուրյանին՝ ծնված 1955 թվականի փետրվարի 28-ին:

2.Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Ալեքսանդր Արշակի Խաչատուրյանի կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 54-Ա/

*Լսեցին*

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՂԱԿԱՁԵՎ ՓՈՂՈՑ 50 ՇԵՆՔԻ 9 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՐՄԵՆ ՌՈՒԲԻԿԻ ԱԶԻԶՅԱՆԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*\/Զեկ. ՄԻՇԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Արմեն Ռուբիկի Ազիզյանի դիմումը՝ *ավագանին որոշում է.*

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 21.98 քմ ընդհանուր մակերեսով 9 բնակարանը անհատույց օտարել (նվիրել) Արմեն Ռուբիկի Ազիզյանին՝ ծնված 1978 թվականի դեկտեմբերի 14-ին:

2.Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Արմեն Ռուբիկի Ազիզյանի կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 55-Ա/

*Լսեցին*

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ 49 ՇԵՆՔԻ 60 ԵՎ 63, 64 ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ ՍԻՄՈՆ ԿԱՄՈՅԻ ՄԱՐԴՈՅԱՆԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ՄԻՇԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Սիմոն Կամոյի Մարդոյանի դիմումը՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 49 շենքի 14.09 քմ ընդհանուր մակերեսով 60 և 41.39 քմ ընդհանուր մակերեսով 63, 64 բնակարանները անհատույց օտարել (նվիրել) Սիմոն Կամոյի Մարդոյանին՝ ծնված 1989 թվականի հոկտեմբերի 22-ին:

2.Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Սիմոն Կամոյի Մարդոյանի կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 56-Ա/

*Լսեցին*

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑ 44 ՇԵՆՔԻ 23 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՌԻՏԱ ՌՈՒԲԵՆԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ՄԻՇԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների

պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Ռիտա Ռուբենի Առաքելյանի դիմումը՝ *ավագանին որոշում է.*

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Զորավար Անդրանիկի փողոց 44 շենքի 41.6 քմ ընդհանուր մակերեսով 23 բնակարանը անհատույց օտարել (նվիրել) Ռիտա Ռուբենի Առաքելյանին՝ ծնված 1959 թվականի հունվարի 15-ին:

2.Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Ռիտա Ռուբենի Առաքելյանի կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 57-Ա/

*__Լսեցին__*

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՂԱԿԱՁԵՎ ՓՈՂՈՑ 50 ՇԵՆՔԻ 1 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԻՐԱԲ ԱՐԱՄԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ՄԻՇԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Վիրաբ Արամի Հարությունյանի դիմումը՝ *ավագանին որոշում է.*

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 17.41 քմ ընդհանուր մակերեսով 1 բնակարանը անհատույց օտարել (նվիրել) Վիրաբ Արամի Հարությունյանին՝ ծնված 1970 թվականի մարտի 19-ին:

2.Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Վիրաբ Արամի Հարությունյանի կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 58-Ա/

Օրակարգի հարցերը սպառվեցին:

Ավագանու նիստն ավարտվեց:

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԳԵՈՐԳԻ

ԱՍՈՅԱՆ ԱՎԵՏԻՔ

ԱՎԱԳՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԼԱՎԻԿ

ՇԱՌՅԱՆ ԱՐԳԱՄ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՕՀԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________________ Հ.ԲԱԼԱՍՅԱՆ**

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ____________________ Լ. ԱՎՈՒՇՅԱՆ**